ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մայիսի 2015 թվականի թիվ 87-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ–728 հրամանագրի 1.6-րդ կետով և ի կատարումն ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 22-ի <<Պետությունը պաշտպանության նախապատրաստելու շրջանակներում 2015թ. զորավարժությունների և մարզումների անցկացման պլան-ժամանակացույցը հաստատելու մասին>> թիվ 72-ԱԳ որոշման՝

որոշում եմ.

1. ՀՀ Տավուշի մարզում 2015թ. հունիսի 10-11 -ին անցկացնել շտաբային ուսումնավարժություն <<Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը, մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգը խաղաղից ռազմական դրության փոխադրման դեպքում>> թեմայով:
2. Նշանակել ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարար վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ Վ. Հովսեփյանին:
3. Ուսումնավարժությանը ընդգրկել՝
   1) ՀՀ Տավուշի մարզպետարանին,
   2) <<ՔՊ>> ծառայություններին,
   3) Մարզային տարահանման հանձնաժողովի աշխատանքային խմբերին,
   4) Պահեստային կառավարման կետի աշխատանքային խմբերին,
   5) Իջևան քաղաքի զինկոմիսարիատին,
   6) ՀՀ Տավուշի մարզային փրկարարական վարչությանը:
4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝
   1)Կազմակերպել ուսումնավարժության պլանավորող փաստաթղթերի ժամանակին մշակումը և հաստատումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի,
   2)Կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի,
   3) Ուսումնավարժության անցկացման պատրաստ լինելու մասին զեկուցել ս/թ հունիսի 5-ին:

5. ՀՀ Տավուշի մարզի տարահանման հանձնաժողովի նախագահ Լ. Սարգսյանին՝ ստուգել տարահանման հանձնաժողովի աշխատանքային խմբերի պատրաստությունը:
6. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ Գ. Մատինյանին՝ վերամշակել և վերախմբագրել պահեստային կառավարման կետի աշխատանքային խմբերի աշխատանքային պլանները:
7. ՔՊ ծառայությունների պետերին՝ ճշգրտել ծառայությունների ՔՊ պլանները և ծառայությունների ուժերն ու միջոցները:
8. Սույն որոշմանը ծանոթացնել ուսումնավարժության մասնակիցներին:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

22 մայիսի 2015թ.
ք.Իջևան